

Քրիստոսն զմահտեսի Մկրտիչն եւ զվաթեւն (զվեթեւն) մեր զպարսն խաչատուրնն եւ այլն:

1454. — Աւետարան մը.

«Ի թուականութեանս Հայոց ի ԶԳ. (= 1454) ամին ձեռամբ . . . գրչի Մինաս երիցուն ի նահանգիս Տիւրքոյ ի վանք Խուռնայլիւոյ ընդ Հովանեաւ Սուրբ Լուսաւորչի եւ սուրբ Աստուածածնի . . . ի յառաջնորդութեան եւ ի վերադիտողութեան Տէր Յովնաննիս: Եւ ի Հայրապետութեան Տեսնն Կարապետի եւ ի միւս Հայրապետութեան արեւելեան կողմանց Տեսնն Դրիզորի»:

1633. — Աւետարան. լաւ օրինակէ գաղափարուած է: Մարկոսի եւ Յովհաննէսի անվաւերները չկան ձեռագրիս մէջ: Գէշ պահուած է, եւ կազմուած ու նորոգուած է 1757 «Մահոթեմէն-բէրէնի արդեամբ»:

«Յիշատակ է սուրբ Աւետարանս մղտեսի Սահակին, եւ իւր ծնաւզացն նիկողոսին եւ Տաթլուկին, Բրիստուրին, Յակոբին, Ներսեսին, Այլային, Պէկլէրին, Խանգաւտին, Շահալէկէ Մայրամին, Թամամին, Մարտիրոսին, Յուսէփին, Ծանփաշայ մղտեսուն, Պաղչային, Մարտիրոսին եւ այլ ամենայն արեան մերձաւորաց եւ Հաւասար նիջեցեցող Հոգուն յիշատակ ետ ի ձեռն Տէր Առաքելին» . . .

Գրեցաւ գիրս թվին ՌՁԲ (= 1633) սուրբ խաչին պատ:

1636. — Խորհրդարան.

«Գրեցաւ խորհրդատետրս ի թվականիս Հայոց ՌՁԻԵ (= 1636) ամի. ամսեանն Յունիսի ԻԸ (= 28) ձեռամբ անիմաստ եւ տգէտ Զարարիս երիցու, ի մայրաքաղաքն Ղալաթոյ ի դռուն Սուրբ Լուսաւորչի Եկեղեցւոյ. յ. ի խնդրոյ սրբանունի եւ խոնարհամիտոյ (մնացածը ճերմակ):»

1656. — Ճշգրտ. բուն յիշատակարանը ինկած է եւ շատ քիչ մասը մնացած է, որմէ կը հասկցուի թէ ճաշոցին Ծաղկունիքն եւ Առաքել քահանայ եւ կիւրակոս երէց: